



**ՅՈՒՅԱՆ**  
 ԳԳԱՆ ԱՐԻՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ԱՌՈՒՆՑՄԱՐՔԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն**

05.12.2025 թ.

**ՔԱՂՎԱԾՔ**

**դիսպանսերային քարտից հ.202/24**

Հիվանդ՝ [REDACTED] Էրիկա [REDACTED]

Ծննդյան թիվ՝ [REDACTED] թ

Հասցե՝ [REDACTED]

**Ախտորոշում՝ Իմունային թրոմբոցիտոպենիա, ձգձգված ընթացք**

Կարճ անամնեզ՝ Երեխայի մոտ 2024թ.օգոստոսի 01-ին ախտորոշվել է առաջնակի ախտորոշված իմունային թրոմբոցիտոպենիա, սուր ընթացք: Ստացել է հորմոնալ բուժում դեքսամետազոնով 4օր (24մգ/մ2/օրը) և Օկտազամ 1գ/կգ/օրը երկու անգամ: Դուրս է գրվել լավացումով 48.0×10<sup>9</sup>/: Այնուհետև պրեդնիզոլոն 2մգ/կգ – երկու շաբաթ - բերանային, որոնց արդյունավետությունը եղել է կարճատև: 19.11.2024թ.-ին սկսվել է Ռևոլեյդով բուժում, մեկ ամիս անց արդյունք չի դիտվել: Շարունակում է ստանալ ռևոլեյդ 25 մգ/օրը դեղաչափով: Անամնեզում՝ ջրծաղիկ, COVID-19:

Օբյեկտիվ՝ ներկայումս հիվանդի վիճակը ըստ հիմնական հիվանդության կայուն է, մաշկը եւ տեսանելի լորձաթաղանթները մաքուր են, նորմալ երանգի են, կան եզակի արյունազեղումներ ստորին վերջույթների առաջային մակերեսին: Բկանցքը հանգիստ է, նշիկները մեծացած չեն: Լեզուն խոնավ է, փառակալած: Ծայրամասային ավշային հանգույցները չեն շոշափվում: Թորքերում լսվում է վեզիկուլյար շնչառություն: Սրտի տոները մաքուր են, ռիթմիկ, պարզ, նորմալ հաճախության: Որովայնը շոշափելիս փափուկ է, անցավ: Լյարդը եւ փայծաղը չեն շոշափվում: Դիզուրիկ եւ դիսպեպտիկ երեւույթներ չկան: Նյարդային համակարգի կողմից ախտաբանական նշաններ չկան:

ԱԸՔ՝ 01.04.2025 թ. Hb - 116գ/լ, էրիթրոցիտներ - 4.86×10<sup>12</sup>/լ, լեյկոցիտներ - 10.48×10<sup>9</sup>/լ, թրոմբոցիտներ - 118.0×10<sup>9</sup>/լ, Ht - 36.2 %, MCV - 74.2 fL, MCH - 23.9 pg, MCHC - 32.0 g/dL, նեյտրոֆիլներ - 43.4%, լիմֆոցիտներ - 49.41%, մոնոցիտներ - 4.7 %, էոզինոֆիլներ - 2.2%, բազոֆիլներ - 0.6%:

Հիվանդը մինչ օրս գտնվում է դիսպանսերային հսկողության ներքո Արյունաբանական կենտրոնի մանկական դիսպանսերային բաժնում և շարունակվում է բուժումը ռևոլեյդ դեղամիջոցով 50/մգ օրը դեղաչափով՝ երկարատև:

Բուժող բժիշկ

դոցենտ Ա.Ն.Զախարյան

Մանկական բաժանմունքի վարիչ

Գ.Ա. Վարդանյան

